

Կոտայքի մարզի բնակչության թվաքանակը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 252800 մարդ, որը հանրապետության ողջ բնակչության 8.5%-ն է, որից՝ 137500-ը քաղաքաբնակներ են (54.4%), 115300-ը՝ գյուղաբնակներ (45.6%):

2016թ. մարզի արտադրական ձեռնարկությունների կողմից թողարկվել է 135.8 մլրդ. դրամի արտադրանք՝ նախորդ տարվա 139.3 մլրդ. դրամի դիմաց կամ ծավալները նվազել են 2.5%-ով: Արտադրանքի ծավալների նվազումը հիմնականում պայմանավորված է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ էլեկտրաէներգիայի արտադրության, մշակող արդյունաբերության, հանքագործական արդյունաբերության ցուցանիշների նվազմամբ: Այսպես, 2016թ. ընթացքում էլեկտրաէներգիայի արտադրության ծավալը կազմել է 57.2 մլրդ. դրամ, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պակաս է 2.5 մլրդ. դրամով կամ 4.4%-ով: Հաշվետու ժամանակահատվածում մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալը կազմել է 75.0 մլրդ. դրամ, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պակաս է 850.0 մլն. դրամով: Ընդ որում նվազում գրանցվել է հիմնականում խմիչքների (2.8%), այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների (30.8%), հիմնային մետաղների (17.4%) և կաշվե արտադրատեսակների (13.0%) արտադրության ճյուղերում, իսկ աճ արձանագրվել է սննդամթերքի (15.8%), դեղագործական ապրանքների (5.9%), պատրաստի մետաղե արտադրատեսակների (61.7%) արտադրություններում: Հաշվետու ժամանակահատվածում հանքագործական արդյունաբերության ոլորտում արտադրության ծավալները նախորդ տարվա համեմատ նվազել են 164.5 մլն. դրամի չափով կամ արտադրվել է 2.5 մլրդ. դրամի արտադրանք:

Արդյունաբերական արտադրանքի իրացման ծավալները հաշվետու ժամանակահատվածում նվազել են 1.7%-ով կամ իրացվել է 136.7 մլրդ. դրամի արտադրանք՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 139.0 մլրդ. դրամի դիմաց:

2016թ. արտադրանքի իրացումը ներքին շուկայում կազմել է 106.4 մլրդ. դրամ, իսկ արտաքին շուկայում 30.3 մլրդ. դրամ, այդ թվում՝ ԱՊՀ երկրներ արտահանվել է 16.3 մլրդ. դրամի և այլ երկրներ՝ 14.0 մլրդ. դրամի արտադրանք: Հաշվետու ժամանակահատվածում արտադրանքի արտահանման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 8.0 %-ով:

մլն. դրամ

	2015թ.	2016թ.	շեղում +/-	%
Թողարկված արտադրանքի ծավալը	139324.3	135816.9	-3507.4	97.5
Արտադրանքի իրացման ծավալը	139022.6	136678.8	-2343.8	98.3
Արտահանման ծավալը, որից՝	32921.7	30291.6	-2630.1	92.0
ԱՊՀ երկրներ	16577.9	16310.2	-267.7	98.4
այլ երկրներ	16343.8	13981.4	-2362.4	85.5

Մանրածախ առևտրի շրջանառության ծավալը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 66.9 մլրդ. դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավել է 16.7 մլրդ. դրամով կամ աճը կազմել է 33.3 %:

Իսկ բնակչությանը մատուցած ծառայությունների գումարը կազմել է 101.8 մլրդ. դրամ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 78.0 մլրդ. դրամի դիմաց կամ աճը կազմել է 30.5%:

2016թ. մարզում կատարվել են 15270.3 մլն. դրամի կապիտալ ներդրումներ, որը կազմում է նախորդ տարվա ընթացքում կատարված ներդրումների 65.8%-ը:

Հաշվետու ժամանակահատվածում արտադրվել է 18.2 հազ. տոննա միս, ինչը նախորդ տարվա համեմատ ավել է 12.3 %-ով: Կաթի արտադրության ծավալն ավելացել է 2.8 %-ով կամ արտադրվել է 68.8 հազ. տոննա կաթ, ձվի արտադրության ծավալը հասել է 125.7 մլն. հատի, որը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ ավել է 0.6%-ով:

2016թ. մարզում գրանցված գործազուրկների թիվը կազմել է 8775 մարդ, ինչը նախորդ տարվա համեմատ ավել է 1297-ով: